# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**ԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

***Քանոնահարուհի, դասավանդող, մանկավարժ, ժուռնալիստ, Կ. Սարաջյանի անվ. ՄԵԴ ուսուցչուհի***

*Երաժշտարվեստը, որպես արվեստի ճյուղ, որպես գեղագիտական կատեգորիա, մարդկային հասարակության նախնական գիտակցության արգասիք չի եղել, ինչպես օրինակ քարը, փայտը և այլն: Այստեղից հետևություն՝ երաժշտությունը մարդկային գիտակցության բարձրագույն աստիճանի արտահայտչամիջոցներից է: Շարունակելով միտքս կուզեի հավելել. քանի որ երաժշտությունը մարդկային մտքի թռիչքի արդյունք է, բայց ոչ թե շոշափելի, այլ հոգևոր և զգայական, ուրեմն մարդուն երաժշտությամբ կրթել, կնշանակի նրան տալ զարգացման լայն հնարավորություն, մտածելակերպի ազատություն և ընկալունակության ազատ դաշտ:*

*Ամերիկա հայտնագործած չեմ լինի, եթե ասեմ, որ արվեստի ճյուղերից այս մեկը՝ երաժշտարվեստը, շատ կարևոր դաստիարակչական նշանակություն կարող է ունենալ ապագա սերունդների համար: Այն մարդու հոգեկերտվածքը կարող է դնել բարոյական բարձր նիշերի վրա և դրանով ապահովել հասարակության որակական բարձր ցուցանիշը: Պատահական չէ, որ ճապոնացի գիտնականները ավելի մանրամասն ուսումնասիրությունների արդյունքում հաստատեցին այս համոզմունքը և իրենց նախադպրոցական քոլեջների ծրագրում մտցրեցին երաժշտության դաս-խաղ: Այստեղ հմուտ մասնագետները երեք տարեկանից փոքրիկներին երաժշտության ճանաչողության և ընկալման դասեր են տալիս, սկզբում իհարկե խաղերի միջոցով: Այս փորձն անարդյունք չմնաց և մեծ տարածում գտավ: Սրա դրական ու կարևոր նշանակությունն այն էր, որ այս կերպ ապագա մարդու մեջ սերմանվում էր կենսակերպի կարևոր գործոններ՝ ինտելեկտ, էթիկայի կանոններ, գեղագիտական ճաշակ: Մասնավորապես ճապոնացի գիտնականների համոզմամբ և նրանց անցկացրած ստատիստիկ տվյալներով, վաղ հասակից երաժշտությամբ կրթված մարդիկ կարողանում են բազմակողմանիորեն դրսևորել իրենց հասարակության մեջ և որ նրանց մարդասպան դառնալու հավանականությունը որպես կանոն շատ ցածր է լինում, ինչը պակաս կարևոր չէ:*

*Պարզ է, որ անհատը պետք է դաստիարակություն և կրթություն ստանա: Բայց, որ հասարակության հիմնաքար համարվող մարդը պետք է համապատասխան նախ՝ դաստիարակություն, իսկ ապա կրթություն ստանա միայն ըստ նախասիրության և ըստ ընդունակության, սա պարտադիր նախապայման պիտի լինի: Սակայն երաժշտարվեստը շոշափելի գիտություն չէ: Այն համադրված և դաշնավորված հնչյունների միություն լինելով, անհատի հոգու աշխարհի արտահայտչամիջոցներից է: Սրանից հետևություն. երաժշտական դաստիարակությունն իր մեջ միայն նոտաներ սովորեցնել կամ կատարողական արվեստին ծանոթացնել չի ակնկալում: Սա կրթություն է, որի ընթացքում զուգահեռաբար ներաշխարհ է կերտվում, ինչն էլ անհատին հետագայում ցանկացած իրավիճակում հոգեվիճակին տիրապետելու ունակություն է տալիս:*

*Նախնական դաստիարակությունն իր մեջ նախօրոք ներառելով նախասիրության և ընդունակության պարտադիր գործոնները, հետո ունի երաժըշտական ուղղությունների պարզաբանման խնդիր: Անպայման պետք է նախապես ճշտել, որ ուղղությունն է նախընտրում երեխան՝դասական, ազգային, թե ուրիշ այլ: Այս ամենն անիմաստ չէ և հաջողություն է ակընկալում:*

*Կարծում եմ, դասապրոցեսին համընթաց հարկավոր է պահպանել երաժշտական դաստիարակության ամենակարևոր նախապայմաններից մեկը՝ նախ սեր առաջացնել, կամ ամենաքիչը երեխայի համակրանքը չվերածել հակակրանքի: Քանի որ պրակտիկորեն ավելի դյուրին է հոգեբանորեն պատրաստ աշակերտի հետ աշխատել և ստանալ դրական արդյունք: Իսկ եթե նա ունի առավել երաժշտական ընդունակություններ՝ ռիթմ, լսողություն, երաժշտական զգացողություն, ապա դասապրոցեսը հեշտանում է, հաջողություններն էլ ակնառու են: Բայց սա չի նշանակում երաժշտական կրթության պիտի տալ բացառապես ընդունակ երեխաներին:*

*Ընդհանրապես մանկավարժական մոտեցման այս ձևը կարելի է վերագրել նաև հանրակրթական դպրոցներին, չնայած երաժշտական և հանրակըրթական դպրոցների դասավանդման պրոցեսները ակնառու տարբերություն ունեն: Այն է՝ անհատական դասավարման ձևը երաժշտական դպրոցներում, ինչի շնորհիվ ուսուցիչ աշակերտ կապն ավելի սերտ է: Այս պարագայում ուսուցչի պատասխանատվությունն ավելին է յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, իսկ կատարած աշխատանքն էլ առավել երևացող: Բոլորովին չնվաստացնելով հանրակըր-*

*թական դպրոցների ուսուցիչների աշխատանքը դարեեւ որոշ։*

*թական դպրոցների ուսուցիչների աշխատանքը դապենք ինքներս, չկա ուսուցչի այնպիսի ֆենոմեն, ով դասական քառասունհինգ րոպե դասաժամի ընթացքում կարողանա անհատապես կառավարել յուրաքանչյուր աշակերտի: Սրա պրակտիկ ապացույցը, առավել հաջողությունների հասնելու համար, հանրակրթական դասերից բացի, երեխային անհատական պարապմունքների առկայությունն է: Այստեղից հետևություն՝ երաժշտական կրթության ինքնին անհատական ուշադրություն պարտադրող ձևն այս կրթության առանձնահատկությունն է և կարևորությունը: Սա ակընկալում է մանկավարժական հոգեբանության խորը գիտելիքներ: Ինչն էլ իր հերթին կնշանակի, որ նույնիսկ ցանկացած պրոֆեսիոնալ կատարող կամ մենակատար չի կարող զբաղվել մանկավարժությամբ:*

*Ընդհանրապես հոգեբանության իմացությունը մանկավարժական գործունեության մեխն է, իսկ մասնավորապես մանկական հոգեբանության գիտակ և պատասխանատու մանկավարժի հաջողությունները որպես կանոն չեն ուշանում: Այս գործոնների բացակայութունը բերում է դասատու-աշակերտ կապի խզմանը, ինչն էլ տանում է նրանց միասնական արդյունավետ աշխատանքի անհամապատեղելիության: Այստեղ կարևորը մանկավարժի հմտությունն է, այն է.*

*1. նախ կարողանալ երեխայի մեջ հետաքրքրություն առաջացնել դեպի առարկան կամ ուսումնասիրվող նյութը,*

*2. աշակերտին պարզաբանել դասավանդվող առարկայի կարևորությունը և դժվարությունները հաղթահարելու ճանապարհները,*

*3. սանի նախասիրությունների, ցանկությունների ու դասավանդվող առարկայի հարմոնիզացումը, ինչն ասպիճանական ու դժվար աշխատանք է, բայց լավ արդյունք է տալիս:*

*Թեորիապես անելիքների այս շարադրանքն անտեղի կլիներ, եթե պրակտիկ օրինակը չունենայի: Լիարժեք դրական է այս ամենի ընդհանուր հայտարարը, քանզի երեսունհինգ և ավելի տարիների աշխատանքն է ապացույցը:*

*Կարծում եմ երաժշտական կրթությունը պարտադիր, բայց ոչ պարտադրաբար դարձնելը կընպաստի առողջ հասարակության ձևավորմանը, ինչի կարիքը ցանկացած հասարակություն ունի, իսկ մեր հասարակությունն առավել ևս: Այս առումով պատահական չէ, որ եվրոպական բարձրագույն բուհերում (Քեմբրիջ, Օքսֆորդ և այլն) կարևորություն և առաջնայնություն են տալիս երաժշտական կրթություն ունեցող դիմորդին, փաստաթղթերի հետ անպայման կցելով երաժշտական որևէ կրթության վկայական, եթե այն կա: Եվրոպական երկրների տվյալ որոշումն ու դրանց իրականացումը մեկ շատ կարևոր միտում ունի՝ երաժշտական կրթությամբ մարդն իր ինտելեկտուալ պոտենցյալով ավելի բարձր է կանգնած, քան այլոք: Նույնիսկ, որոշ գիտնականների պնդմամբ, գործիքային արվեստին տիրապետող երաժշտի մտը գլխուղեղի երկու կիսագունդն էլ հավասարաչափ է զարգացած, ինչը նորմալ է: Սա բացատրվում է նրանով, որ նվագի ժամանակ երաժշտական ֆրազաների հաճախակի ձեռքից-ձեռք փոխանցումները կամ թեկուզ միաժամանակյա նվագը հավասարազոր կառավարվում են գլխուղեղի երկու կիսագնդերի միջոցով հավասարապես:*

*Մարդը թերևս իր բոլոր գործողությունների և գործունեության վարքն սպասում է պրակտիկ աշխատանքի պարագայում: «Երեխաները մեր ապագան են» կարգախոսը պիտի լինի կանոնակարգված, որակյալ և արդյունավետ աշխատանքի գրավական, այլ ոչ թե գեղեցիկ դարձվածք հաճախակի կրկնելու համար: Մանկավարժությունը մարդու գործունեության այն ձևերից է, երբ համապատասխան աշխատանքը նույնարժան արդյունք է տալիս: Ավելի անկեղծանալով պիտի ասել, որ հաճախ մանկավարժն իր դերում չի լինում, այլ կարծես «դեր է տանում» ուղղակի: Այս դեպքում ոչ ոք ավելի, քան այսպիսի մանկավարժը կարող է հոգեբանորեն ճնշել երեխային, ավելին՝ շատ բան փչացնել երեխայի հոգեկերտվածքի մեջ: Մանկավարժների միջև եղած ճամփաբաժանն էլ հենց թույլ է տալիս նկատելու ճիշտ իր տեղում գործող մանկավարժին և հակառակը: Հարց է ծագում, մանկավարժությունը կոչում է, թե զուտ մասնագիտություն: Անվիճելի պատասխանը մեկն է՝ ցանկացած մասնագիտություն կոչում է, միայն պետք է ճիշտ տեղում հայտնվել: Վառ օրինակ՝ վարպետ կավագործն անշունչ ու անձև կավին կարող է կենդանություն տալ, իր տեղում չգտնվող մանկավարժը կենդանի էակին կարող է խեղել: Եզրակացությունը մեկն է.մանկավարժությունը բավականին բարդ ու միևնույն ժամանակ նուրբ մասնագիտություն է: Ժամանակն է տարբերակել մանկավարժական գործունեության մի քանի գործոններ.*

*1. մասնագիտության ճիշտ ընտրություն, համապատասխան և լիարժեք գիտելիքներ,*

*2.ճիշտ մեթոդաբանություն,*

*3. հոգեբանորեն պատրաստվածություն,*

*4.որոշումների մեջ վստահություն, նաև ազնվություն,*

*5.ժամանակի պահանջներին համապատասխանող ինքնակրթության անկասելի ընթացք:*

*Վերջինս թեև դժվարացնում, բայց ընդլայնում է մանկավարժի գործունեության ծավալները: Քանի որ առանձնացված ժամանակահատվածում այս կամ այն առարկայի միջոցով դաստիարակությունն ու կրթությունը չեն կարող կղզիացած լինել ժամանակի այլ և այլ ազդող գործոններից:*

*Մանկավարժությունը նաև պրակտիկ գիտություն է ժամանակի ու տարածության մեջ, անընդհատ զարգացող, փոփոխվող ու նորարար: Այն անշուշտ, որոշակի կանոններ ունի, նաև նախորոք պլանավորած ծրագրեր, սակայն չի կարող շարժվել աքսիոմաներով: Հակառակ դեպքում այն դառնում է անհետաքրքիր, ինքն իրեն կրկնող երևույթ, ինչը ցավոք առկա է մանկավարժական պրակտիկայում:*

*Պատվավոր այս մասնագիտությունը մեծ պատասխանատվություն է ազգի և սերունդների առջև, այս պատճառով էլ լուրջ աջակցություն պետք է ու-*

*նենա պետության կողմից: Հայտնի բան է, որ ընդհանրապես պետական նախնական կրթական օջախը դպրոցն է, և սա այն դպրանոցն է ուր պետությունը կրթում է անհատին թե հանրակրթորեն, կամ թե երաժշտապես: Կնշանակի այս երկու դպրոցներին պետության նույն կերպ չհովանավորելը սխալ է: Որովհետև ճիշտ կերտվածքով մանուկն ու երիտասարդը, երկրի ու պետության, կառավարման ղեկը ճիշտ ուղու վրա պահողներն են: Նրանք են վաղվա պատմաբաններն ու փաստաբանները, ուսուցիչներն ու գիտնականները, երաժիշտները, քաղաքական գործիչներն ու դիվանագետները: Միայն ազնիվ ու նվիրված աշխատանքի արդյունքում կունենանք ժամանակին հարիր, զարգացած ու խելապես հայրենասեր քաղաքացիներ: Քանզի հայրենասիրությունն իր մեջ միայն անձնազոհության տարրեր չի պարունակում, այլ նաև նվիրված ու ազնիվ աշխատանք, պատասխանատվություն սեփական ժողովրդի ու պետության նկատմամբ: Սա լավ գիտեն նվիրյալները:*

*Այլ կերպ ասած՝մանկավարժությունը բարդ գիտություն է, թերևս ամենաբարդը, քանզի այն իր մեջ ոչ միայն մարդկային հարաբերությունների խտացում է ներառում, այլ նաև մտապահ սերնդի դաստիարակության գաղտնիքներ: Մանկավարժի ձեռքում սա մի «զենք» է այսօրվա մանուկին, վաղվա քաղաքացուն ճիշտ դաստիարակելու, այլ խոսքով ասած՝ կյանքի ճիշտ ուղի ցույց տալու համար:*

*Եվ վերջապես, երեխան որպես անհատ ու նաև ժամանակի արար, իրեն դաստիարակող և կրթող մանկավարժին բնականոն կերպով իր նկատմամբ անհատական մոտեցում է պարտադրում: Այս է մանկավարժության կարևորությունը և իմաստը: Հենց սրանում է իրական մանկավարժի բարձր կոչումը:*

***Բանալի-բառեր.*** *մանկավարժություն, երաժշտական դաստիարակություն, մեթոդաբանական խնդիրներ, մանկավարժական հոգեբանություն, հոգեբանական դաստիարակություն, մանկական դաստիարակության մեթոդներ:*

***Ключевые слова:*** *педагогика, методология, значение музыкального воспитания, методологические проблемы, психология, практическая наука, методы детского воспитания.*

***Keywords:*** *Pedagogy, musical education, methodological problems, pedagogical psychology, psychological education, methods of children's upbringing.*

***Տեղեկություններ հեղինակի մասին.*** *ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԻ (ծ. 14. 12. 1957 թ., ք. Ալավերդի (Լոռու մարզ, Հայաստան): Մենակատար քանոնահար, ժուռնալիստ, ԵՊԿ դասախոս: Հեղինակ է քանոն նվագարանի չորս դասագրքերի՝ «Անմար գոհարներ» գիրք 1-ին (հրատ. 2005), Գիրք 2-րդ (Եր., 2010 թ.), «Փոխադրումներ քանոնի համար» գիրք 3-րդ (2010 թ.), «Խաչատուր Ներսիսյանի կոնցերտային պիեսները քանոնի համար» (2010 թ.), մի շարք հոդվածների՝ «Նրան էլ են փորձում յուրացնել» (հակիրճ տարբերակ //Ավանգարդ, 8-14 ապրիլ 2009 թ.), «Բարեկամությունը ծնվում է ժպիտից», //Երաժշտական Հայաստան, ամսագիր, 1-3 (44-45) 2013 թ.), «Արմինե Պողոսյան. կոչումով մանկավարժը», //Երաժիշտ ամսաթերթ, ապրիլ 2013 թ., «…Իսկ բարեկամությունը շարունակվում է», //Հայաստան, շաբաթաթերթ 13-20 դեկտեմբերի 2012 թ., «Երջանկությունը թևեր է տալիս, հայրենասիրությունն արժանապատվության զգացում», //Երաժշտական Հայաստան, ամսագիր: Ունի հոդվածներ նաև «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ պաշտոնաթերթում, «Մարտիկ» Արցախի Հանրապետության պաշտոնաթերթում, Բեյրութի (Լիբանան) «Խօսնակ» ամսաթերթում և այլ: Աշխատել է. քանոնահարուհի՝ 1979–1983 թթ. Արմավիրի (Հոկտեմբերյան) շրջանի Ձերժինսկու սովխոզի երաժշտական դպրոցում, 1980–1986 թթ. Հայաստանի Թ. Ալթունյանի անվ. Երգի-պարի պետ. անսամբլում, 1986 –1987 թթ. Հայաստանի Գուսանական պետ. անսամբլում, 1990– 1991 թթ. Հայաստանի Պարի պետական անսամբլում, 1993–2001 թթ. ՀՀ ռադիոհեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվ. ժողովրդական գործիքների անսամբլում, դասավանդել է 1990 – 2009 թթ. Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, 2009–ից մինչև այժմ Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցում:*

***Сведения об авторе:*** *КИРАКОСЯН АНУШ МЕСРОПОВНА (род. 14. 12. 1957 г., г. Алаверди (Лориксий р-н, Армения), солист—канонист, педагог ЕГК-а, является автором четырех учебников для музыкального инструмента канон 1. “Анмар гоарнер” часть -1 (2005), 2. “Анмар гоарнер” част-2 (2010), 3. “Транспорт пиес для канона” (2014) 4. “Концертные пьеси для канона Хачатура Нерсисяна” (2010), абтор ряд статей: “Его тоже хотят присвоить” (краткое версия //Авангард 8-14 апреля 2009 г., “Дружба рождается с улыбкой” (журнал //Музыкальная Армения 1-3 (44-45) 2013 г., “Армине Погосян. педагог по призванию” //“Музыкант” газета, апрель 2013 г.), “...А дружба продолжается” еженедельник //Айастан, 13-20 декабря 2012 г. и другие. Печатается в газете //Еражишт, //Ай зинвор, МО Армении, //Мартик, МО Арцах, в журнале //Музыкальная Армения, //Хоснак, Бейрут (Либанан). Работала: 1979—1983 Музыкальная шк. Дзержинского совхоза Армавирского р.-на, 1980—1986 Гос.ансамбль Песни-пляски им. Т. Алтуняна, 1986—1987 Гос. Гусанкский нсамбль, 1990—1991 Гос. Ансамбль Танца Армении, 1993—2001 Гос. Ансамбль народных инструменто Радио и Телв. РА им. А. Мерангуляна, 1990—2009 Гос. консерватория им. Комитаса, с 2009 до с. д. ДМШ им К. Сараджяна.*

***Information about the author:*** *KIRAKOSYAN ANUSH MESROP (was born on 14 December 1957 in Armenia, Alaverdi). A soloist kanon player, as well as a lecturer of music at YSC Anoush Kirakosyan is an author of four books including "Eternal diamonds 1" (2005), "Eternal diamonds 2"(2010), "Works for kanon" (2010) and "Khachatur Nersisyan's concert plays for kanon" (2010). She also wrote a number of articles including "They want to make them theirs as well" (brief version in "Avangard", 8-14 April 2009), "Friendship is born from a smile" (//Musical Armenia" journal, 1-3 November, 2013), "Armine Pogosyan titled teacher" ("Musician" Yerevan State Conservatory magazine, April 2013), "...But the friendship is going on", //Armenia" newspaper,13-20 December 2012, "Happiness gives wings, the patriotism - feeling of dignity", //Musical Armenia journal, and many more. She's also being published on "Musical Armenia" official magazine of the YSC, "Musician" newspaper, “Armenian soldier” the official newspaper of the Ministry of Defence of the Republic of Armenia, “Fighter” the official newspaper of the Ministry of Defence of the Republic of Artsakh, Lebanese (Beirut) "Speaker" magazine and not only. In different time periods she worked in different places among which were: 1979-1983 The musical school of the city Hoktemberian, 1980-1986 Tatul Altunyan Armenian state song & dance ensemble, 1986-1987 Armenian State Ensemble Minstrel Folk Songs of Armenia, 1990-1991 Armenian State Dance Ensemble, 1993-2001 The Aram Merangulyan Folk Instruments Ensemble of Public Radio, 1990-2009 Yerevan State Conservatory after Komitas, 2009 - present Musical school after K. Sarajyan.*

## Резюме

Канонистка, преподаватель ЕГК, журналист ***Ануш Месроповна Киракосян.*** ***-“Некоторые вопросы проблем методологии преподавания”.***

В статье дается значение музыкального искусства как фактора разностороннего воспитания индивидуума, воспитательная роль учителя в развитии всестороннеразвитого гражданина общества. Работа адресована и учащимся, и студентам музыкальных вузов.

## Summary

Canon player, pedagogue of YSC, journalist ***Anush Mesrop Kirakosyan. - “Some questions of the problems of teaching methodology”.***

In article the value of musical art as factor of versatile education of an individual, an educational role of the pedagogue in the development of the citizen of society is given. Work is addressed to both pupils, and students of musical higher education institutions. She discusses all the important points of a child's musical upbringing, mentions its importance and generally speaks about the necessity and the challenges of the musical education and overall about the important questions of child's musical upbringing and about the ways of overcoming them.